ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ: Ժողովածու: Գիրք 2, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1988, 334 էջ:

Գիրքը հայ նոր գրականության պատմությունը լրացնում է XIX դ. գրականության այն դեմքերով, որոնց կյանքը և ստեղծագործությունն առ այսօր քիչ է հայտնի ընթերցող հասարակայնությանը: Նորահայտ փաստերով վերլուծվում են գրող, թարգմանիչ, հրապարակախոս և հասարակական գործիչ Ստեփան Ոսկանյանի դրական-դեղարվեստական և հրապարակախոսական ժառանգությունը (հեղինակ՝ Ս. Շտիկյան), «Հյուսիսափայլի» գրական դպրոցի նշանավոր դեմքերից մեկի՝ գրող և բժիշկ Գարրիել Տեր-Հովհաննիսյանի, կյանքի պատմությունը, ներկայացվում են նրա նշանավոր «Տեր-Սարգիս» վեպի գաղափարական և գեղարվեստական արժանիքները, շրջանառության մեջ են դրվում պատմվածքները, ակնարկները, թատերախոսականները, հուշապատում երկերը (հեղինակ՝ Հ. Բաղդասարյան): Հայ ազգային բանաստեղծության նշանավոր դեմքերի՝ Թումաս Թերգյանի և Հովհաննես Սեթյանի, քնարական աշխարհի ոճական անհատականության ու աշխարհընկալման մասին խոսվում է առաջին անգամ՝ ծավալուն ու ամբողջական (հեղինակ՝ Կ. Մամիկոնյան): Ուշագրավ հետազոտություն է նվիրված XX դարասկզբի հայ դեղարվեստական արձակի նշանավոր դեմքերից մեկի՝ հրապարակախոս, քննադատ Օննիկ Չիֆթե-Սարաֆի, կյանքին ու գործունեությանը (հեղինակ՝ Հ. Հակոբշանյան):

Պատասխանատու խմբագիր՝ Ս. Ն. Սարինյան:

ՀԱՅԿԱԶ ՊՈՂՈՍՅԱՆ— Վասպուրականի պատմությունից (1850—1900), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1988, 352 էջ:

Աշխատության ութ գլուխներում խոսվում է XIX դ. երկրորդ կեսին Վասպուրականի (Վանի վիլայեթ) վիճակագրության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների և ազատագրական շարժումների մասին: Ներկայացվում են հայ-քրդական ու հայ-ասորական փոխհարաբերությունները և 1850—60-ական թվականներին Վանում տեղի ունեցած հասարակական բախումները (Պողոսյան և Ապողոսյան):

Գրքում մանրամասն ներկայացված է Մ. Խրիմյանի գործունեությունը Վասպուրականում (1850—1860): Հատուկ ուշադրություն է նվիրված 1870—1880 թվականներին թուրքական բռնակալության դեմ Վասպուրականի հայության ազատագրական շարժումներին և Վանի 1896 թվականի ինքնապաշտպանական կռիվներին: Հետաքրքրությամբ են ընթերցվում Վասպուրականում լուսավորության գործը ներկայացնող էջերը: Գիրքն ունի ցանկեր:

Պատասխանատու խմբագիր՝ Վ. Ա. Պարսամյան:

ԼԵԶՎԻ ԵՎ ՈՃԻ ՀԱՐՑԵՐ (XI), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1988, 383 էջ:

Ժողովածուում զետեղված է 4 հոդված: Դրանցում խոսվում է գիտական-բանասիրական տեքստում պարբերության կազմակերպման առանձնահատկությունների, գրային և արտասանական հաղորդակցության մեջ հայերենի հնչյունների կապակցելիության, տեքստի որոշակիացման հարցերում հաշվողական տեխնիկայի կիրառման մասին: Բացահայտված են բարդ համադասական նախադասության համակարգում միավորյալ նախադասության դերը, նրա բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները, երկկազմ և միակազմ միավորյալ նախադասությունները: Ժողովածուն ունի օգտագործված գրականության ցանկ և համառոտագրություններ:

Պատասխանատու խմբագիրներ՝ Ս. Գ. Աբրահամյան, Ռ. Մ. Թոխմախյան, Ա. Մ. Արամյան, Բ. Կ. Ղազարյան:

ՆԵՐՍԵՍ ԹՈՎՄԱՍՅԱՆ, ՀՐԱՅՐ ԹԱՄՐԱԶՅԱՆ, ԳՈՀԱՐ ՊԱՊԻԿՅԱՆ— Հայ տնտեսագիտական մտքի պատմության ուրվագծեր, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1988, 439 էջ:

Գիրքն ունի երկու բաժին՝ XIX դ. երկրորդ կեսի արևելահայ լիբերալ բուրժուական տնտեսագիտական մտքի պատմություն և արևմտահայ տնտեսագիտական մտքի պատմություն:

Առաջին բաժնի երկու գլուխներում ցույց են տրվում կապիտալիզմի զարգացման ուղիներն ու հեռանկարները, աշխատանքի և կապիտալի փոխհարաբերությունը։ Խոսվում է գյուղացիական ռեֆորմի հետևանքների և ագրարային հարաբերությունների, քաղաքատնտեսության կատեգորիաների և բուրժուական տնտեսագիտական ուսմունքների բնութագրման մասին։

Երկրորդ բաժնի վեց գլուխներում լուսաբանվում են քաղաքատնտեսության հարցերը Մխիթարյան միաբանների աշխատություններում և դասընթացները՝ արևմտահայ տնտեսագիտական դրականության մեջ։ Ուսումնասիրված են Հարություն Սվաճյանի և Գրիգոր Չիլինկիրյանի սոցիալ-տնտեսագիտական դաղափարները։ Հատուկ ուշադրություն է նվիրված Մատթեոս Մամուրյանի աշխատություններում արտահայտված տնտեսագիտական հարցերին և մամուլում հրատարակված տնտեսագիտական հոդվածների բնութագրությանը։ Գիրքն ունի ծանոթագրություններ։

Պատասխանատու խմբագիրներ՝ Ռ. Ն. Սարինյան, Ա. Ա. Խառատյան։

ՇԻՐԱԶ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ— *Էկոնոմիկա և քաղաքականություն (հարաբերակցությունը սոցիալիզմի կատարելագործման պայմաններում), Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1988, 276 էջ։*

Մենագրության մեջ հետազոտվում է էկոնոմիկայի և քաղաքականության հարաբերակցության մարքսիստական ըմբռնումը, ցույց տրվում, որ լենինյան դրույթը էկոնոմիկայի որոշիչ դերի մասին մարքսյան դրույթի շարունակությունն է, զարգացումն ու ավարտը (գլուխ առաջին)։ Երկրորդ գլխում ներկայացվում է էկոնոմիկայի և քաղաքականության փոխհարաբերակցությունը սոցիալիստական դեմոկրատիայի, սոցիալիստական ապրելակերպի ու ազգային հարաբերությունների բնագավառում։ Գիրքն ունի վերջաբան և օգտագործած գրականության ցանկ։

Պատասխանատու խմբագիր՝ Մ. Ա. Հարությունյան։